ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- նոյեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի №383Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի նոյեմբերի 4-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Անապատ-2» փոքր հիդրո-էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №383Ա որոշմամբ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայով ամրագրված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել վեց ամիս ժամկետով՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, որոշման մեջ «մինչև 2021 թվականի նոյեմբերի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022

թվականի մայիսի 25-ը» բառերով, իսկ «մինչև 2036 թվականի ապրիլի 11-ը» բառերը՝ «մինչև 2036 թվականի հոկտեմբերի 11-ը» բառերով:

2. «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հուլիսի 9-ի №4279-02 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 11 856 750 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարից 5 928 375 (հինգ միլիոն ինը հարյուր քսանութ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 11 856 750 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի հուլիսի 9-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 25-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2021թ.